



Նազարոս Առայան

Քյորոլին՝ կալանավոր

Քյորոլին գող չէր և ո՛չ ավագակ, այլ՝ մի ինքնագլուխ իշխան, իսկ այդ անկախությանը հասել էր նա իր անվեհերությունովը և քաջագործություններովը: Նա չէր հափշտակում և կողոպտում, այլ՝ հարկ ու մաքս էր առնում և չտվողներին անխնա պատժում: Բայց Իրանի թագավորը նրան համարում էր ավագակ, այսպես էին ճանաչում նրան և սուլթաններն ու խալիֆները, որոնց կարծիքը Քյորոլու համար նշանակություն չուներ, նա այսպես էր դատում.

«Եթե հարկ առնելը մեղք է՝ ինչո՞ւ իրանք առնում են: Եթե հնագանդելը լավ բան է՝ ինչո՞ւ իրանք ինձ չեն հնագանդում: Իրանք գոռով ու բռնությամբ են տիրում աշխարհին, ես էլ իրանց պես կվարվեմ: Այս բարբարոս ավագակները իրանց աչքի գերանը չեն տեսնում, բայց համարձակում են իմ աչքումը շյուղ գտնել: Իրանք իրանց ավագակ չեն համարում, չնայած որ նույնիսկ Աստուծո փառքն են հափշտակում, իսկ ինձ՝ Աստուծո ամենախոնարհ ծառայիս, համարում են ավագակ»:

Այսպես է դատում Քյորոլին՝ իբրև բնության պարզ որդի, որի գլուխը ցված չէր գանազան կանխակալ կարծիքներով:

Բայց ամենայն օր գանգատ ու բողոք էր, որ անընդհատ հասնում էր Իրանի թագավորին, որին հանդիմանում էլ էին, թե՛ եթե դու ես մեր թագավորը, ազատիր մեզ Քյորոլու ձեռից, որ քեզ ծառայենք, իսկ եթե ոչ՝ մենք կամա-ակամա պիտի Քյորոլուն հպատակվենք, նրան ծառայենք: Եվ ահա ինչ էին ասում իրանց գանգատներում Քյորոլու մասին:

– Նա,– ասում էին,– թալանում է քարավանները, գերի է տանում հարուստ վաճառականներին և մինչև մեծ փրկանք չի առնում՝ բաց չի թողնում:

Գյուղացիներին ոտքի է կանգնեցնում իրանց խսաների ու բեգերի դեմ, կոտորում և կոտորել է տալիս կալվածատերերին ու տերության կապալառուներին, և այսպիսով իր կողմն է գրավում երկրագործ ժողովրդին: Կոտորում է հարկահաններին և հավաքած հարկերը բաժանում չքավոր գյուղացիներին:

Շատ անգամ կտրում է գյուղացոց հարաբերությունը քաղաքացոց հետ, ուտեստի պաշարը թանկացնում, և մինչև քաղաքներից մեծ վճար չի առնում՝ հարաբերության կապը չի արձակում:

Քրիստոնյաներին առանձին պաշտպանություն է ցույց տալիս և նրանց պաշտպանությունը գտնում ամեն տեղ:

Որտեղ մի կարգե դուրս քաջ տղամարդ կա՝ գնում է Քյոթոլլու դրոշակի տակ մտնում: Որտեղ մի փախստական և մահապարտ կա՝ նրա հովանավորությանն ու պաշտպանությանն է դիմում: Այսպիսով նա կազմակերպած խումբեր ունի երկրի բոլոր ամուր տեղերում: Բոլոր անմատչելի բերդերին տիրելով՝ ամենի վրա իր անունն է դրոշմել: Բոլոր խումբերն իրար հետ սերտ կապ ունին, և հարկավոր դեպքերում միմյանց օգնության են հասնում:

Ամեն հավաստի ու ցեղի մարդ կա նրա խմբի մեջ, բայց մի անգամ այդ խմբի մեջ մտնելով՝ ոչ մի հավաստի չեն ծառայում, ամենքն էլ միապես դառնում են անհավատ և ծաղրում ամեն հավատ: Չեն ընդունվում միայն այն մարդիկը, որոնք որևէ քաջությունով իրանց հայտնի չեն կացուցել, կամ որևէ դժվար հանձնարարություն և փորձ չեն կատարել: Ինքը պաշտելու չափ սիրում է ամեն մեկին և ամենի հիմար կամքը կատարում՝ նույնիսկ իր կյանքը վտանգի տակ դնելով: Բոլոր սիրահարներին իրանց մուրազին է հասցնում՝ բերելով նրանց սիրո առարկան: Ինքն էլ ամեն մի բերդում մի առանձին սիրուհի ունի: Իրանց սիրուհիները փակված չեն պահվում, նրանք պարտավոր են գինավարժությամբ պարապել, ձիավարություն գիտենալ և, հարկավոր դեպքերում՝ քաջությամբ կռվել: Այս կերպով ահա նա հավաքել է երկրի ամենագեղեցիկներին, որոնք հմայվածի պես անձնվիրություն են ցույց տալիս նրան և, անհավատ լինելով՝

նրա՛ն միայն հավատում ու սիրում:

* * *

Քյորոլին ամենից շատ վնաս էր հասցնում Իրան աշխարհին: Այդ ասելությունը ժառանգական էր, հորից որդուն անցած: Բայց Քյորոլուն ժամանակակից Իրանի թագավորը մի վեհանձն մարդ էր: Նա, երբ որ լսում էր Քյորոլու քաջությունը՝ մտքումն ասում էր. «Եթե ես թագավոր չլինեի՝ ամենայն ուրախությամբ Քյորոլու քաջերից մեկը կդառնայի, նրա պես ազատ կյանք կվարեի»: Այս պատճառով նա ահագին գորքով (մոտ երեսուն հազար հոգուց բաղկացած) ուղարկեց իր ամենից փորձառու զորապետին՝ Բոլի-բեգ անունով, և պատվիրեց նրան, որ Քյորոլուն կալանավորե՝ պաշարելով այն բերդը, ուր որ նա կլինի: Սպանելու հրաման չտվավ, ընդհակառակն՝ ասաց, որ եթե Քյորոլուն սպանես՝ քեզ կախադան կբարձրացնեն. եթե քաջ ես՝ նրան պետք է բերես ինձ մոտ ողջ-առողջ:

Իրանի թագավորը չէր ուզում գրկվել Քյորոլու պես մի անվանի հերոսից, և ուզում էր նրան իր մոտ տանել և նրանով հաղթել իր արտաքին թշնամիներին: Բոլի-բեգը նախ պիտի աշխատեր զանազան խոստումներով Քյորոլուն հրավիրել շահի մոտ, իսկ եթե այդ չհաջողեր՝ միայն այն ժամանակ պիտի գործ դներ իր ահագին բանակի ուժը:

Քյորոլին այդ ժամանակ գտնվում էր մեր երկրումը, որ Իրանի իշխանության տակն էր: Երբ էր այդ ժամանակը՝ հայտնի չէ, և ոչ էլ տեղն է հայտնի որոշակի:

Թագավորի մտադրությունը Քյորոլու մասին թեպետ անկեղծ էր՝ նա, անշուշտ, մեծ պատվի կհասցներ Քյորոլուն, բայց Քյորոլին ավելի լավ էր համարում Հայաստանի հովասուն լեռներում ազատ ավազակ համարվիլ, քան թե շահնշահի եռապարիսպ պալատում նույնիսկ շահ լինել, ուր մնաց, որ ինչքան էլ մեծ իշխան լինեի՝ դարձյալ շահի ստրուկը պիտի համարվեր: Լինել հպատակ, թեև հազար ու մեկ շքանշանով զարդարված՝ ասելի էր բնության ազատ զավակին:

Քյորոլին սովորություն ուներ շատ անգամ ծպտած ման գալու: Նստում էր մի էշի կամ ջորու վրա, աշրդի հագուստով (աշրդները ջոկ հագուստ ունեին հնումը),

սազը մեջքից կախած, առանց որևէ գենքի և, գյուղեգյուղ թափառելով, զանազան տեղեկություններ էր հավաքում, և ըստ այնմ իր զգուշությունը գործ դնում և անելիքն անում: Մեկ անգամ էլ հենց այսպես ծպտած ժամանակ լսում է, որ Բոլի-բեզը եկել է մեծ գորքով և բանակ է դրել Թոնա գետի մոտ: Եկել է ոչ իբրև գորքով պատերազմ, այլ՝ իբրև մի ցեղապետ իր ժողովրդով ամարանոց, իր հետ բերել է և իր կանանցը: Բոլոր հարյուրապետները ևս բերել են իրանց գերդաստանը, որով կազմել են մի թաթարական օրդու: Իրանց հետ ունին նաև ոչխար, տավար, ուղտեր և ամենայն ինչ: Իհարկե, այս ավելորդ բաներն այնքան շատ չէին, որ իսկույն շիմացվեր, թե՛ սա մի խաշնարած ժողովրդի չվումն չէ մի տեղից մյուս տեղ, այլ՝ պատերազմական նպատակ ունեցող մի բանակ է:

Քյորոլին, առանց երկար մտածելու, իր ջորին քշում է ուղիղ դեպի այդ բանակը, որ կշոն նրա որպիսությունը: Հենց որ նրան տեսնում են, իբրև աշրդի, ամեն մեկն իր կողմն է քաշում և հրավիրում, բայց Քյորոլին ոչ մեկին չի լսում, քշում է ջորին և իջնում է գորապետի վրանի առջև: Բոլի-բեզը շատ ուրախանում է և հրամայում է նրան՝ ցույց տալ իր շնորհքը, գվարճացնել իր խաղերով, և եթե գիտե՛ք Քյորոլու խաղերիցն ասե: Այս առաջարկությունից օգուտ քաղելով՝ Քյորոլին ասում է հետևյալ խաղը, մեղմացնելով իր սհեղ ձայնը, որ չճանաչվի.

Ո՞վ կաք այս բանակում իմ ծանոթներից,
Շուտով իմ քաջերին մի լուր հասցրեք.
Թող հարձակվեն ամեն կողմից խմբերով
Ինձ էլ մեկ վահան ու մի թուր հասցրեք.

Հասեք, շուտով հասեք,
Մի լուր հասցրեք:
Ասացեք՝ եկել են դեղնած բոստանչիք,
Արխաշրով փորերն ուռած թուլուղչիք,
Սուր չը տեսած, բանից փախած փինաչիք,
Եկեք այս խեղճերին առողջացրեք.
Հասեք, շուտով հասեք,
Մի լուր հասցրեք:
Չեն ճանաչում արծիվն ագռավի շորում,

Չորս կողմից ծաղրում են ու կտցահարում,
Քյորոլուն բռնելու թակարդ են լարում,
Եկեք սրանց գլխում մի խելք մտցրեք.
Հասեք, շուտով հասեք,
Մի լուր հասցրեք:

Քյորոլու խաղի միտքը լավ հասկացան նրա բարեկամ լրտեսները և շտապեցին
լուր տանելու նրա քաջերին: Բայց Բոլի-բեգը ևս կասկածի եկավ, թե՛ սա ինքը
չէ՞ արդյոք Քյորոլին, և հարցրեց.

Աշը՛ղ, այդ խաղը ե՞րբ է ասել Քյորոլին:

Քյորոլին պատասխանեց.

Մի՞թե քեզ հայտնի չէ, խա՛ն, որ փառիշահը քանիցս անգամ ուզեցել է
կալանավորել Քյորոլուն. մեկ անգամ էլ Բոլի-բեգին է ուղարկում մեծ գորքով:
Քյորոլին աշրդի հագուստով պատահմամբ ընկնում է նրա բանակը, ուր և
ասում է այս խաղը, որով իմաց է տալիս իր քաջերին, թե ուր է ընկել ինքը, և
նրանք էլ գալիս են ազատում:

Այդ Բոլի-բեգը չի լինում, աշը՛ղ, այլ գուցե՛ Վելի-բեգը լինի եղած: Բայց դու ա՛յս
ասա, ինչո՞վ ես հաստատում, որ դու ինքդ չես Քյորոլին, որովհետև ինքդ քեզ
մատնում ես՝ խոստովանելով, որ Քյորոլին երբեմն ծպտելով՝ աշրդություն էր
անում:

Խա՛ն, հենց այդպես էլ հարցրել է Բոլին, և տեսեք՝ Քյորոլին ի՛նչ է
պատասխանել.

Ինչով ուզես, Բոլի՛, ես երդում կուտեմ,
Որ ես մի խեղճ հայ եմ և ոչ Քյորոլին.
Երկինք, գետինք, Աստված վկա կըկանչեմ,
Որ ես մի խեղճ հայ եմ և ո՛չ Քյորոլին.
Հայ եմ, հա՛յ, հարա՛յ,
Հայ եմ, ուղիղ հայ:

Հայի ճեղին դու չես տեսնիլ սուր ու թուր,
Այդ բանն արգելել է մեր մեծն Այսմավոր,
Թեկուզ գլխիս թափես հազար թուր ու մուր՝
Ես մի անբախտ հայ եմ և ո՛չ Քյոթոլիին.
Հայ եմ, հա՛յ, հարա՛յ,
Հայ եմ, ուղիղ հայ:

Եթե թուրը ձեռին Քյոթոլուն տեսնես՝
Հավատա ինձ, Բոլի՛, դու կըսարսափես,
Թեպետ սազ էլ ունի, երգում է ինձ պես,
Բայց ես մի խեղճ հայ եմ և ոչ Քյոթոլիին.
Հայ եմ, հա՛յ, հարա՛յ,
Հայ եմ, ուղիղ հայ:

— Սպասի՛ր, աշըղ,— ասում է Բոլին,— այդ իմ հարցի պատասխանը չէր: Ես
իսկական Բոլի-բեզն եմ և ո՛չ Ալին կամ Վելին, և հիմա ուղղակի հարցնում եմ
քեզ. ինչո՞վ ես ապացուցանում, որ դու Քյոթոլիին չես:

– Խա՛ն, ես այդպես չհասկացա,— պատասխանեց Քյոթոլիին,— ես հենց իմացա,
թե դու Բոլի-բեզնի հարցումը տվիր, ես էլ՝ Քյոթոլու պատասխանն ասացի: Եթե
ինձ վրա կասկած ունիս, որ մտքովս անցնել չէր կարող, ուրեմն՝ լսի՛ր իմ
պատասխանը:

Քյոթոլիին ուզում էր միայն զբաղեցնել Բոլի-բեզնին, մինչև կհասնեն իր քաջերը,
բայց և այնպես՝ նա այլևս չի ուզում իրան նվաստացնել և հայտնում է, թեև մութ
կերպով, որ ի՛նքն է Քյոթոլիին և ունի հայկական ծագումն.

Ես մի Չալալի եմ, անունս է Ռուշան,
Հորս անունն է Խոր, մորս Խորիշան.
Արհեստով աշըղ եմ, ինչպես տեսնում եք,
Որ ես Քյոթոլիին չեմ ահա՛ ձեզ նշան:
Կանչում եմ նշան նշան,
Պատմում եմ նշան նշան,
Մարդն ունի մարդու պատկեր,

Շունն էլ ունի շան նշան:
Եթե իրավ ես լինեի Քյորոլին,
Ինքս լինեի նրա թուրը, նրա ձին
Այն ժամանակ կրտեսների, Բոլի-բեգ,
Որ Քյորոլուց պակաս քաջ չէ Խորոլին:
Չեմ թաքցնում խոր եմ խոր,
Իմ թշնամուն խորեմ խոր,
Աղբյուրի պես բարակ եմ,
Ծովի նման խո՛ր եմ, խո՛ր:
Քյորոլին է իմ սիրելին, իմ խանը,
Ես նրա երգիչն եմ, նա՛ իմ պաշտպանը,

Նրա ահեղ ձայնը միայն լսելով
Դողում, զարհուրում է ողջ Պարսկաստանը:
Վախ չունիմ մահ ու ահից,
Ազատ եմ մահու ահից,
Մարդիկ մահով չեն մեռնում,
Այլ միայն մահու ահից:
Խորոլին եմ, ոչ մի բանից ահ չունիմ,
Ինքս մեծ իշխան եմ, թեև գահ չունիմ,
Թող ողջ լինի միայն իմ դոչ Քյորոլին,
Սուլթան ու խաներից ոչ մի շահ չունիմ:
Չեմ սիրել խան ու սուլթան,
Կատեն իշխան ու սուլթան,
Խան կա՛ մի խան չարժե,
Սուլթան կա՛ անուս-ուլ-թան:

Այս երգից հետո Բոլի-բեգն ասում է.

– Աշը՛ղ, իրավ որ դու քուրդ ես ու քրդավարի էլ խաբում ես ինձ: Եթե դու
Քյորոլին չես, այլ՝ Խորոլին, այդ ինձ համար միևնույն է, երկուսդ էլ
վտանգավոր եք: Ես Խորոլուն կբռնեմ, թող Քյորոլին գա նրան ազատե:

Այս ասելուց հետո Քյորոլլու ոտները կապել է տալիս, ուզում է կապել տալ և կոները, բայց Քյորոլլին խնդրում է, որ կոներն ազատ թողնեն ու սազը ձեռքիցը չառնեն, ասելով.

– Խա՛ն, այս շատ մեծ պատիվ է, որ ինձ տալիս եք. ասած է՝ «Մեկ օրվա խանությունն էլ է խանություն», դուք մեկ օրով ինձ Քյորոլլի եք շինում, թույլ տվեք, ուրեմն, Քյորոլլու խաղերիցն ասեմ ձեզ համար, մինչև կբռնեք իսկական Քյորոլլուն և խեղճ աշրդին կազատեք:

Եվ Քյորոլլին սկսեց բուն Քյորոլլու ահեղ ձայնով հետևյալ խաղը.

Բոլի՛, նամագդ արա, մեղքերդ քավի,
Հրես որտեղ որ է՝ քաջերս կրգան.
Դագաղըդ շինել տուր, պատանըդ կարի,
Հրես հոգիդ առնող դևերըս կրգան.
Եկե՛ք, քաջեր, եկե՛ք.
Էլ մի՛ ուշանաք:
Մեկ կա՛ հազար արժե, հազար կա՛ ոչ մին,
Ամբողջ բանակովդ չարժես իմ մեկին.
Գերանդիով, թոփուզներով ահագին,
Հրես կացնով ջարդող գիժերըս կրգան.
Եկե՛ք, քաջեր, եկե՛ք.
Էլ մի՛ ուշանաք:
Քյորոլլուս արթոն է անառիկ Սասուն,
Հսկաներիս թիվն է մինչև քառասուն.
Լացե՛ք գլուխներըդ, ո՛վ դուք անասուն,
Հրես ձեզ պատառող վագրերըս կրգան.
Եկեք, քաջեր, եկե՛ք.
Էլ մի՛ ուշանաք:

Քյորոլլու ահեղ ձայնից ոչ միայն մարդիկ սարսափեցին, այլև բոլոր անասունները որոնք կարծեցին, թե՛ առյուծ է մոնչում: Սաստիկ վախեցավ և ինքը՝ Բոլի-բեգը, բայց ինքն իրան անհոգ ձևացրեց՝ չուզենալով հավատալ, թե՛ նա ի՛նքն է Քյորոլլին: Այս միջոցին Քյորոլլու աչքը պատահմամբ ընկավ դեպի

վարագույրը (որի հետևը ծածկված էին Բոլի-բեգի կանայքը և ծակուծուկերից նայում էին Քյորոլուն ու հիանում) և, մեկի սիրունիկ աչքերը տեսնելով, մոռացավ իր քաջերին և սկսեց իր երգը դեպի նույն գեղեցկուհին դարձնել.

Անպերում թաքնված, իմ սիրո՛ւն արև,
Մեկ՝ փայլում ես, մեկ էլ՝ ծածկվում խավարում.
Վանդակի մեջ դրված սոխակի նման,
Մեկ՝ երգում ես, մեկ էլ լռում ու տխրում.

Ինչո՞ւ, հոգի՛ս, ինչո՞ւ,
Ինչո՞ւ ես տխրում:
Արևագուրկ ծաղիկ, անջուր, թալկահար,
Վարդ, դու կուգես քեզ մի բյուբյուլ սիրահար.
Ագռավ մարդրդ քեզ անում է կտցահար,
Գիտե, որ դու իրան սրտով չես սիրում.
Ինչո՞ւ, հոգի՛ս, ինչո՞ւ,
Ինչո՞ւ չես սիրում:
Քյորոլունս պես մի քաջի ես դու արժան,
Որ դրախտ դարձնեն այդ կյանքըդ դաժան,
Դու կրլիներս իմ սիրուհիս անբաժան,
Այժմեն իսկ իմ հոգին քե՛զ եմ նրվիրում.
Հավատա՛ ինձ, հոգի՛ս,
Քե՛զ եմ նրվիրում:

– Լռի՛ր, հանդուգն,– բղավեց Բոլի-բեգը խանդոտությունից կատաղած և հրամայեց կապոտել Քյորոլու կոները: Քյորոլին ոչ մի ընդդիմություն ցույց չտվավ: Նա այդ բոլորը մի կատակ էր համարում, իսկ նրանց թոկերը՝ իր համար մի սարդի ոստայն:

Քյորոլու ձեռք ու ոտքը կապոտելուց հետո մի թոկ էլ վզիցը կապեցին և Բոլի-բեգի հրամանով տարան Թոնա գետի ափը, որ նրան ընկղմեն գետի մեջ՝ առանց խեղդելու, այլ՝ այնքան ընկղմեն և հանեն, մինչև ուժից ընկնի իսպառ և ուղիղը խոստովանի, եթե ինքը ճշմարիտ Քյորոլին է:

Գետափին ձիաներ կային օրուզ տված: Հենց որ մոտեցավ այդ ձիաներին՝ թռկերը կտրտեց, իր տանողներին քարերի պես շարտեց գետի մեջ, իսկ ինքը մի ոստյունով թռավ մի լավ ձիու վրա և, անթամբ ու անսանձ ձիու գլուխը երկու ձեռքով իր ուզած կողմն ուղղելով՝ դուրս պրծավ բանակից: Այս անակնկալ դեպքի վրա ամենքն էլ շփոթվեցին ու շշկվեցին, բայց մեկ էլ որ տեսան՝ հեռվից մի թանձր փոշի բարձրացած վազում է դեպի իրանց այնպես արագ, որ կարծես նրան մղում էր մի անեղ փոթորիկ, բոլորովին սարսափի մեջ ընկան:

Այդ թոզն ու դումանը բարձրացրել էին Քյորոլու քաջերի ձիաները, որոնք գալիս էին սրարշավ, և նրանց տրոփյունի ձայնը արդեն մինչև բանակն էր հասնում: Բոլի-բեգը, որ Քյորոլու կողմից հարձակվելու հույս չուներ բոլորովին, և ո՞վ կհամարձակվեր մի փոթորիկ խմբով ամբողջ բանակի վրա հարձակվել, շուտով պատրաստվեց դիմադրելու: Բայց ի՞նչ օգուտ: Եկողները հազարներից ընտրված մի-մի դյուցազն էին, և իրանց քաջության համեմատ մի-մի սարսափելի մականուն ունեին՝ շքանշանի տեղ ստացած, ինչպես՝ Վարագաթուր, Գայլաբերան, Փղակնճիթ, Վագրաճանկ, Առյուծաթաթ, Անասան, Չարհուրելի, Ասլանբալա (առյուծի ձագ), Քյարքյադան (մի եղջերու), Ագրայիլ (չար հրեշտակ), Ղրխազան կամ Ղրխդոն (քառասունին ջարդող): Քյորոլին չուներ ոչ մի մականուն, բայց երբեմն անվանվում էր Հաստընչացք և Ահեղաձայն:

Քյորոլին արդեն նստել էր Ղոսթի վրա և ձեռքն առել իր վահանն ու թուրը: Նա գալիս էր ամենի առջև: Բանակին մոտեցան թե՛ չէ՛ այնպես հարձակվեցան, ինչպես ժիր հնձողները հասած արտի վրա, և սկսեցին հնձել անխնա: Ձիավորները հնձում էին, իսկ ձիաները ոտնատակ տալիս, կալսում: Հնար չկար դիմադրելու, գորքը երեսը շրջեց և փախուստ տվավ: Փախավ և Բոլի-բեգը, բայց նրան շրջապատեցին և կալանավորեցին: Քյորոլին ազատեց նրան, միայն կանայքն առավ ձեռիցը և բաժանեց իր քաջերի մեջ վիճակով, ինքը չառավ ոչ մեկին, որ իր Նիգյարի սիրտը չպակսեցնե: Բացի Նիգյարից, որին սիրում էր բոլոր սրտով, ուրիշ կին չուներ, թեպետ կարծում էին, որ նա շատ կանայք է պահում:

Այս փառավոր հաղթությունից հետո, երբ որ վերադարձավ տուն, Քյորոլին մի փառավոր խնջույք տվավ, երգելով պատմեց Նիգյարին բոլոր անցքը և

անուն-անուն գովեց իր քաջերին՝ մեկ-մեկ թվելով ամեն մեկի արածը: Նիգյարն էլ, ի նշան շնորհակալության, մի ահագին բաժակ լցնում էր գինով և իր ձեռքով տալիս ամեն մեկին: Գերի ընկած սիրուն տիկիհներն էլ շատ ուրախ էին, որ, գերվելով, ազատվել են իսկական գերությունից, և փոխանակ ամենքը միասին մի վատուժ մարդ ունենալու՝ հիմա ամեն մեկը միայնակ կունենա մի հերոս:

Մեր քաջերն իրանց խնջույքը վերջացրին հետևյալ պարզ երգով, որ երգեցին ամենքը միատեղ՝ մի ուրախ եղանակով.

Հայրը պատերազմ գնաց,
Որդին ծածուկ հետևեց,
Հոր գլխին սուր պրսպըղաց,
Որդին նրան ազատեց:
Այ բա՛խտ, դրա՛խտ,
Դրա-րա-րա-րա՛խտ:

Հայրը որդուն գիրկն առավ,
Նրա ճակտից համբուրեց.
Որդին թուրը ձեռքն առավ,
Հոր թշնամուն խորտակեց:
Այ բա՛խտ, դրա՛խտ,
Դրա-րա-րա-րա՛ խտ:

Մայրը շատ ափսոսում էր
(Որդին էր դեռ պատանյակ),
Նրա համար հյուսում էր
Թարմ ոստերից մի պսակ:
Այ բա՛խտ, դրա՛խտ,
Դրա-րա-րա-րա՛ խտ:

Որդին եկավ հաղթական,
Հետն էլ բերավ դեռահաս
(Իր մոր համար օգնական)

Մի գեղեցիկ նորահարս:
Այ բա՛խտ, դրա՛խտ,
Դրա-րա-րա-րա՛ խտ:

Մայրը եփեց ձրվածեղ,
Ուտեցըրեց երկուսին.
Հետո շինեց փափուկ տեղ,
Պատկեցըրեց միասին:
Այ բա՛խտ, դրա՛խտ,
Դրա-րա-րա-րա՛ խտ:

Վերջաբան

Աշըղները երբ որ պատմում են այս արկածը և վերջացնում՝ սովորաբար մի խրատական կամ ծիծաղաշարժ խաղ էլ իրանցից են ասում կամ նույնիսկ՝ Քյորոլու ասածներից ուրիշ դեպքում: Իբրև օրինակ՝ բերենք հետևյալ խաղը.

Ով որ ձուկ բռնել չըզիտե՛
Կարթի պատիվն ի՞նչ կիմանա.
Խըխունջներից գոհ եղողը
Թարթի պատիվն ի՞նչ կիմանա.

Ո՞վ է տեսել փայտից մաշա
Կամ բոշայից դառած փաշա:

Ով սիրում է փտած հինը՝
Չի հասկանալ նորի գինը.
Քուչերն ընկած թեթև կինը
Մարդի պատիվն ի՞նչ կիմանա:

Քուրդը չի սովորիլ փեշակ,
Պղպեղը չի դառնալ մեխակ,
Ագռավը, որ դառնա սոխակ,
Վարդի պատիվն ի՞նչ կիմանա:

Սուտ չէ Քյորթլու ասածը,
Նրա երգածն ու խոսածը.
Փայասներուն մեծացածը
Չարդի պատիվն ի՞նչ կհմանա:

Աքաղաղը չէր հավանում սոխակին:
– Կուզե՞ս,– ասաց,– հարցնենք ավանակին:
– Ո՛չ, ո՛չ,– պատասխանեց սոխակը,–
Ես ավելի հավան եմ քո՛ ճաշակին...